

Թիւ 27614
Յունուար 26, 1982

Մեծայարգ
Տիար Յակոբ Երէցեան
Թորոնթօ.

Յարգելի Տիար Երէցեան,

Այսու զիրով մեր խորին շնորհակալութիւնը կը յայտնենք ձեզի եւ Տիար ճոզէֆ Դանլեանի, ինչպէս նաեւ ձեր ատենապետութեամբ կազմուած կարգադիր Յանձնախումբի անդամներուն՝ Չորեքշաբթի Յունուար 6-ի ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՍՈՒՐԲ ԺՆՆԴԵԱՆ ՀԱԽԱՔՈՅԹԻ արձանագրած քացառիկ յաջողութեան համար:

Ուրախութեամբ կը հաստատենք որ կարգադիր Յանձնախումբիդ յանձն ատած զտրողութիւնները տուին ակնկալուած արդիւնքը, եւ մօտ 850 հայ մանուկներ ըով քովի գալով, թէ Եկեղեցւոյ եւ թէ տօնականօրէն զարդարուած սքրահին մէջ, հաղորդուեցան Ս. Ծննդեան ոգիով եւ միասնաբար դիմաւորեցին սոր Տարին՝ խանդավառ միջնուորտի մը մէջ:

Մեզի համար հոգեկան համոյքի առիթ մը եղաւ շրջապատելի հայ մանուկներով եւ պահ մը մանկանալ անոնց հետ: Ուրախ ենք որ յայտագիրը ընթացաւ կանոնաւոր կերպով՝ համաձայն ծրագրին:

Համեցէք գնահատանքի մեր զգացումները փոխանցել թուր անոնց՝ որոնք իրենց ժամանակն ու կարողութիւնը ի սպաս դրին այս տօնակատարութեան յաջողութեան համար:

Կ'աղօթենք որ Տէրը թուր հայ մանուկները պահէ անփորձ եւ անվտանգ եւ իր օրհնութիւնները անզակաս ընէ անոնց վրայէն:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՍ ԱՐՔԵՂԻՍԿՈՂՈՍ
Առաջնորդ